1437

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«06» 02 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 016 - 24

Ձեռնարկողը՝ ***«ՍԱԳԱՄԱՐ» ՓԲԸ***
Երևան, Նալբանդյան 48/1

Գործունեությունը՝ Ստեփանավանի հանքային դաշտի «Զքնաղ-Արմանիս» տեղամասում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 016 - 24

<06> 02 2024թ.

Լոռու մարզի Ստեփանավանի հանքային դաշտի «Չքնաղ-Արմանիս» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Նախաձեռնող՝	«ՍԱԳԱՄԱՐ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության Նախնական գնահատման հայտ, Ծրագիր,
Տեղադրման վայրը՝	Լոռու մարզ, Ստեփանավան, Գյուլագարակ, Փամբակ համայնքների Ուրասար, Ստեփանավան, Պուշկինո, Արջուտ բնակավայրեր

Ներածական մաս. Ստեփանավանի հանքային դաշտի Չքնաղ-Արմանիս հեռանկարային տարածքի երևակումներում «ՍԱԳԱՄԱՐ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից նախատեսվում է 2024-2027թթ. ընթացքում կատարել Ստեփանավանի հանքային դաշտի Չքնաղ-Արմանիս հեռանկարային տարածքի առանձին երևակումների, հանքայնացված գոտիների, հանգույցների որոնողագնահատողական աշխատանքների կատարում՝ առկա օգտակար հանածոների պաշարների գնահատման համար:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 2)-րդ կետի ա. ենթակետի՝ «երկրաբանական ուսումնասիրություններ» վերը նշված նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի:

Նկարագրական մաս. Երկրաբանական ուսումնասիրության նպատակով Ընկերության կողմից հայցվող՝ Ստեփանավանի հանքային դաշտի Չքնաղ-Արմանիս հեռանկարային տարածքը զբաղեցնում է մոտ 5149.7221 հա մակերես, գտնվում է Լոռու մարզի կենտրոնական հատվածում՝ Ստեփանավանի տարածաշրջանում: Համաձայն Ընկերության կողմից ներկայացված տեղեկատվության՝ հայցվող տեղամասը վարչական տեսանկյունից ներառված է ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան խոշորացված համայնքի (Արմանիս և Ուրասար բնակավայրեր), Փամբակ խոշորացված համայնքի (Արջուտ բնակավայր) և Գյուլագարակ խոշորացված համայնքի (Պուշկինո բնակավայր) վարչական սահմաններում: Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը բնութագրող կոորդինատները (ըստ WGS-84 (ARMREF 02) համակարգի) ներկայացված են եզրակացությանը կից Հավելվածում:

Ստեփանավանի հանքային դաշտից հայցվող Չքնաղ-Արմանիս հեռանկարային տարածքը երկրատեկտոնական շրջանացման տեսակետից գտնվում է Սևան-Բազում, Զանգեզուրի տեկտոնական գոտու հյուսիս-արևմտյան հատվածում: Տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են նստվածքային, հրաբխածին

նստվածքային, էֆուզիվ, մերձհրաբխային և մետամորֆային ապարների տարատեսակ համալիրներ:

Որոնողագնահատողական փուլի աշխատանքների հիմնական նպատակներն են.

- հանքայնացման տեսակետից հեռանկարային համարվող ապարների համալիրների բացահայտում և ուսումնասիրություն,
- ապարների հիդրոթերմալ առանձնահատկությունների ուսումնասիրություն,
- հանքայնացման բնույթի և հանքաքարի միներալային, քիմիական կազմերի ուսումնասիրություն:

Որոնողագնահատողական փուլում աշխատանքների հիմնական տեսակները ներառում են երկրաֆիզիկական և երկրաքիմիական հետազոտությունները: Երկրաֆիզիկական հետազոտությունները թույլ են տալիս ստանալ ընդհանրական պատկերացում տարածքի խորքային կառուցվածքի, մետաղաբեր գոտիների/հանքային մարմինների տեղաբաշխման, դրանց վերհսկող տեկտոնական խախտումների տարրերի վերաբերյալ: Երկրաքիմիական ուսումնասիրություններով սահմանազատվում են առաջնային և երկրորդային ցրման պսակները, անոմալիաները, կատարվում է տարածքը կազմող ապարների (այդ թվում՝ նաև հանքաքարի) քիմիական, միներալոգիական և պետրոգրաֆիական հետազոտությունների իրականացման համար անհրաժեշտ քարաբանական նյութի հավաք: Եթե երկրաֆիզիկական, երկրաքիմիական աշխատանքների արդյունքներով առանձնացվեն հանքայնացված գոտիներ, հանգույցներ, հանքային մարմիններ կամ եթե դրանք հատվեն կառուցվածքային-որոնողական հորատանցքերով, ապա իրականացվելու է որոնողագնահատողական աշխատանքների հաջորդ փուլը՝ նպատակ ունենալով սահմանազատել և ուրվագծել հանքային մարմինները կամ հանքայնացված գոտիները և հանգույցները, կատարելով դրանց նմուշարկում: Հանքային մարմինների, հանքայնացված գոտիների/հանգույցների ուրվագծումն ու նմուշարկումը նախատեսված է իրականացնել մակերեսային լեռնային փորվածքների (առուներ, հետախուզահորեր, մաքրվածքներ) անցմամբ, կառուցվածքային-որոնողական և հետախուզական հորատանցքերի հորատմամբ: Հորատման աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել նաև գրունտային ջրերի հորիզոնների հիդրոերկրաբանական դիտարկումներ:

Որոնողագնահատողական աշխատանքների արդյունքում նախատեսված է.

- կազմել տեղամասի և հանքային գոտիների/մարմինների երկրաբանական քարտեզը և նմուշարկման հատակագծեր,
- որոշել հանքայնացման մորֆոլոգիական տիպը, հանքային մարմինների տեղաբաշխման երկրաբանակառուցվածքային պայմանները,
- կատարել հանքայնացման կապակցում որոշակի լեռնային ապարների համալիրների հետ, ուսումնասիրել հանքաքարի միներալային կազմը,
- նմուշարկել հանքային մարմինների բնական մերկացումները և հետախուզական փորվածքները,
- գնահատել հանքային մարմինների, հանքայնացված գոտիների/հանգույցների չափերը, մետաղների պարունակությունները և դրանց տեղաբաշխման առանձնահատկությունները,
- կատարել հանքավայրի արդյունաբերական նշանակության նախնական գնահատում,
- հաշվարկել կանխատեսումային պաշարները, որոշել նախնական հետախուզման փուլի աշխատանքներին անցնելու նպատակահարմարությունը:

Հեռանկարային տեղամասերի երկրաբանական կառուցվածքի և երկրաքիմիական և երկրաֆիզիկական անոմալիաների ուսումնասիրության, ինչպես նաև հանքայնացումը խորը հորիզոններում հատելու նպատակով նախատեսվում է կառուցվածքային-որոնողական շուրջ 15 հորատանցքերի հորատում (ընդհանուր խորությունը 2500 գծ.մ):

Հայցվող տարածքում առկա են մի շարք դաշտամիջյան և միջհամայնքային բնահողային ճանապարհներ, որոնք թույլ կտան մոտենալ աշխատանքների իրականացման նախանշված վայրերին: Նախատեսվում է գոյություն ունեցող ճանապարհների առանձին հատվածների բարեկարգում՝ մոտ 2կմ: Միաժամանակ, հեռանկարային համարվող տեղամասերի հասանելիության ապահովման համար նախատեսվում է 4մ լայնությամբ և 2կմ երկարությամբ նոր բնահողային ճանապարհների կառուցում (մակերեսը՝ 8000մ^2), ինչը թույլ կտա իրականացնել հորատման հաստոցի, բեռների և աշխատակիցների անվտանգ փոխադրում: Հայցվող տարածքում հողաբուսական շերտի միջին հզորությունը կազմում է 0.2մ: Հորատման հարթակների կառուցման ժամանակ հանվելու բուսահողը և մինչև 1մ խորությամբ գրունտային զանգվածը:

Որոնողագնահատողական աշխատանքների ավարտից հետո Ընկերության կողմից նախատեսվում է կատարել խախտված հողերի ռեկուլտիվացիա: Ռեկուլտիվացիայի նպատակով հետախուզաառուների, մաքրվածքների և հորատման հարթակների տարածքից հանված գրունտը և հողաբուսական շերտը հետ են լցվելու՝ խախտված տարածքները վերականգնելու նպատակով: Ռեկուլտիվացիայի իրականացման համար նախատեսված նախահաշվային արժեքը գնահատվել է 10230.13 հազ. ՀՀ դրամ և ընդգրկում է հետևյալ ծախսատեսակները՝ աշխատավարձը, նյութերի արժեքը, անուղղակի ծախսերը, շահույթը, ավելացված արժեքի հարկը և այլ ծախսեր:

Նախնական գնահատման հայտում ներկայացվել են տեղամասում երկրաբանական ուսումնասիրության դաշտային աշխատանքների (որոնք ներառում են՝ հանութային, հիդրոերկրաբանական, ինժեներաերկրաբանական և երկրաֆիզիկական աշխատանքները, հորատումը, մակերեսային փորվածքների անցումը, նմուշարկումը) իրականացման արդյունքում շրջակա միջավայրի բնական բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունները և դրանց կանխարգելմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնցից կարևորվում են.

- բուսահողի առանձնացում, պահպանում՝ մինչև նախատեսված աշխատանքների ավարտը (ներառյալ ճանապարհների բացում),
- ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացում որոնողահետախուզական աշխատանքների ավարտից հետո, խախտված լանդշաֆտի վերականգնում,
- աշխատող տեխնիկայի շահագործման ժամանակ օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար,
- կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր,
- ծխագազերի և անօրգանական փոշու արտանետումների վերահսկման նպատակով՝ մեքենաների տեխնիկական վիճակի նախնական և պարբերական ստուգումներ, շարժիչների աշխատանքի կարգավորում, արտանետման խողովակների վրա զտիչների տեղադրում,
- փոշենստեցման նպատակով ճանապարհների ջրցանում,
- տարածքում ավտոմեքենաների և տեխնիկայի տեղաշարժի համար այնպիսի ճանապարհների ընտրություն, ջրային ռեսուրսների վրա հնարավոր աղդեցությունները բացառելու նպատակով,

- մարդկանց և կենդանիների անվտանգության ապահովման նպատակով որոնողահետախուզական աշխատանքների տեղամասում ցուցանակների և անվտանգության ազդանշանների տեղադրում (ներառյալ ճանապարհների բացում),
- կենդանական և բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ:

Համաձայն հայտում ներկայացված տեղեկատվության՝ Ընկերության կողմից հայցվող տարածքը չի համընկնում տարածաշրջանում առկա բնության հուշարձանների կամ դրանց պահպանման գոտու հետ, ինչպես նաև բնապահպանական տարածքների հետ /«Գյուլագարակի» պետական արգելավայրը ուսումնասիրվող տարածքից գտնվում է ավելի քան 5 կմ կամ 14 կմ հեռավորությունների վրա/ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները չեն կարող որևէ ազդեցություն ունենալ դրանց վրա:

Համաձայն Հայտի տեղեկատվության՝ տարածքով անցնում են Չքնաղ և Գարգառ գետակները և դրանց միացող փոքրիկ վտակներ: Աշխատանքների այս փուլում գետակները չեն կրելու բացասական ազդեցություն, քանի որ հորատանցքերը և փորվածքները արվելու են որոշակիորեն նախատեսված կետերում և չեն ներառելու գետակների հուներ:

Ընկերության կողմից ծրագրավորված աշխատանքները կատարվելու են կապալառու մասնագիտական կազմակերպությունների կողմից և գործունեության հետևանքով առաջացած թափոնները տնօրինվելու են վերջիններիս կողմից, թափոնների կառավարման համար անհրաժեշտ լրացուցիչ ֆինանսական միջոցներ չի նախատեսվում: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ողջ ժամանակահատվածի համար Ընկերության կողմից մշակվել է բնապահպանական կառավարման և մոնիթորինգի ծրագիր: Շրջակա միջավայրի բաղադրիչների նկատմամբ մոնիթորինգի իրականացման ծախսերը գնահատվել են 5005,5 հազ. ՀՀ դրամ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի՝ փորձաքննական գործընթացն սկսելու պահին գործող խմբագրության (այսուհետ՝ Օրենք/ 37-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սկսված և սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին չավարտված փորձաքննության գործընթացի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են փորձաքննության գործընթացն սկսվելու պահին գործող իրավական ակտերով»: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի փորձաքննությունն իրականացվել է Օրենքի վերը նշված պահանջներով:

Լոռու մարզի Ստեփանավանի հանքային դաշտի «Չքնաղ-Արմանիս» տեղամասում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության Հայտի փորձաքննության փուլում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպվել և իրականացվել են հանրային քննարկումներ Ստեփանավան, Գյուլագարակ և Փամբակ համայնքների՝ Ուրասար, Արմանիս, Պուշկինո և Արջուտ բնակավայրերում: Նշված բնակավայրերում առաջին փուլի հանրային քննարկումների արդյունքում համայնքների ղեկավարների կողմից Օրենքով սահմանված տրամադրվել են նախնական համաձայնություններ: Քննարկումների ընթացքում բարձրացվել են հարցեր և եղել են մտահոգություններ ինչպես ուսումնասիրության, այնպես էլ հետագա արդյունահանման աշխատանքների ընթացքում հնարավոր բնապահպանական, սոցիալական ռիսկերի առաջացման և Ընկերության կողմից ազդակիր համայնքներում/բնակավայրերում սոցիալական ծրագրերի և միջոցառումների իրականացման վերաբերյալ:

Հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ Լոռու մարզպետարանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները /ներառյալ՝ էկոպարեկային ծառայությունը/, արտակարգ իրավիճակների, առողջապահության,

ԿԳՄՍ նախարարությունները, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, կադաստրի կոմիտեն, որոնց կողմից ներկայացված կարծիքները հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում, փորձաքննության գործընթացում և փորձաքննական եզրակացությունը կազմելիս: Օրենքով սահմանված փորձաքննական գործընթացին ներգրավվել և մասնակցել է նաև փորձագետ, որի կողմից ներկայացված մասնագիտական կարծիքը/եզրակացությունը ևս հաշվի է առնվել փորձաքննական գործընթացում:

Փորձաքննական գործընթացում կարևորվել է հայցվող տարածքում բնապահպանական էկոհամակարգերի պահպանությունը, անտառային հողերի բացառումը, բնապահպանական տարածքների հետ համընկնման բացառումը, ջրային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունների բացառումը: Այդ նպատակի համար փորձաքննության գործընթացում Հայտը երկու անգամ վերադարձվել է Ընկերությանը լրամշակման, գրություններում մի շարք դիտարկումների հետ մեկտեղ պահանջվել է նաև հայցվող տարածքի հողերի պատկանելության, դրանց նպատակային և գործառնական նշանակության, սեփականության ձևերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման վերաբերյալ: Ընկերության կողմից պատասխան պարզաբանումները կամ պահանջվող տեղեկատվությունը ներկայացվել են ոչ լիարժեք, թերություններով կամ չհիմնավորված:

Փորձաքննական հիմնավորումներ: Փորձաքննական գործընթացում Հայտի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ.

1. Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տեղամասի զբաղեցրած տարածքի հարավ-արևելյան հատվածը համընկնում է «Գյուլագարակի» պետական արգելավայրի տարածքի արևմտյան հատվածի հետ («Գյուլագարակի» պետական արգելավայրի սահմանները հաստատվել են շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի օգոստոսի 10-ի 278-Լ հրամանով հաստատված անտառկառավարման պլանով, հողումը՝ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայք http://env.am/storage/files/forest-14-08.rar): Հայտում հայցվող տարածքից արգելավայրի գտնվելու հեռավորության վերաբերյալ ներկայացվել է հակասական տեղեկատվություն («Գյուլագարակի» պետական արգելավայրը երկրաբանահետախուզական տեղանքից գտնվում է ավելի քան 5կմ հեռավորության վրա, կամ 14 կմ հեռավորության վրա, կամ ապահովված է 25-30 մ բուֆերային գոտի»:
2. երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տեղամասի հարավ-արևելյան մի հատվածը տեղակայված է Գարգառ գետի՝ արգելավայրի զբաղեցրած տարածքով հոսող վտակի ջրհավաք ավազանում: Հարկ է նշել, որ արգելավայրի ստեղծման հիմնական նպատակն է՝ այնտեղ աճող սոճու ռելիկտային տեսակի էկոհամակարգի պահպանությունը, ուստի ուսումնասիրության ինչպես նաև հետագայում արդյունահանման աշխատանքների արդյունքում հնարավոր բացասական ազդեցության կենթարկվի արգելավայրի ջրային և ցամաքային էկոհամակարգերը (հարկ է նշել որ բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման գոտիները հիմնականում ընդգրկում են տվյալ ԲՀՊՏ-ով անցնող գետերի ջրհավաք ավազանները):
3. Հայտում Երկրաձևաբանական, հողերի բնական տիպերի, լանջերի թեքության և սողանքային մարմինների տարածման սխեմատիկ քարտեզները չեն ներկայացվել բուն հայցվող տարածքի ուրվագծային արտացոլմամբ:
4. Հայցվող տարածքում առկա են ՀՀ կենդանիների Կարմիր գրքում և ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված կենսաբազմազանության տեսակներ, սակայն նշված հանգամանքը հաշվի չի առնվել Հայտի լրամշակումներում:

5. Ծրագրի «Ընդհանուր տեղեկություններ» բաժնում ներկայացված քարտեզները և ծայրակետային կոորդինատները չեն համապատասխանում Հայտում ներկայացված քարտեզներին և ծայրակետային կոորդինատներին:
6. «ՍԱԳԱՄԱՐ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հողամասի շրջադարձային (բեկման) կետերի կոորդինատներով պարփակված տարածքը ընդգրկված է ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Պուշկինո բնակավայրի, Փամբակ համայնքի Արջուտ բնակավայրի և Ստեփանավան համայնքի՝ Ստեփանավան, Ուրասար բնակավայրերի վարչական սահմաններում (ինչի վերաբերյալ տեղեկատվությունը հավաստվում է կադաստրի կոմիտեի կողմից ստացված կարծիքով), սակայն հայցվող տարածքում Ստեփանավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող հողամասի ընդգրկվածության վերաբերյալ տեղեկատվությունն ի սկզբանե չի եղել հայտում (հանրային քննարկումները կազմակերպվել և իրականացվել են Արմանիս բնակավայրում):
7. Արջուտ բնակավայրում իրականացված 2-րդ հանրային քննարկման մասնակիցների մի մասը դեմ արտահայտվեցին երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներին և հանրային քննարկման ընթացքում ստորագրեցին որպես դեմ քվեարկողներ (նաև ըստ տեսաձայնագրության), սակայն այն արտացոլված չէ Փամբակ համայնքի ղեկավարի կողմից ստորագրված արձանագրությունում: Արձանագրության բովանդակությունից պարզ չէ նաև համայնքի ղեկավարի դրական կամ բացասական դիրքորոշումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերը նշված փորձաքննական հիմնավորումները և առաջնորդվելով Օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով՝ ՓԲԸ-ի Լոռու մարզի Ստեփանավանի հանքային դաշտի «Զքնաղ-Արմանիս» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Հերիքնազ Մկրտչյան